600.0143.26.04.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 ապրիլի 2017 թվականի №143Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի №203Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2017 թվականի մարտի 28-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հունիսի 12-ի «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №203Ա որոշման մեջ՝

   1) «Զեղեա» բառը փոխարինել «Վայք» բառով.

   2) 2-րդ կետով հաստատված «ԱՐՓԱ-ԷՆԵՐԳԻԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0500 լիցենզիայի պայմանների՝

      ա. 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2017 թվականի հուլիսի 26-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի ապրիլի 26-ը» բառերով.

      բ. 6-րդ և 10-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 2622 կՎտ հաշվարկային հզորությամբ «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:».

«10. «Արփա» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 3482 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) հիդրոտուրբին՝ G125.111/26g, 2001 կՎտ, 2012թ,

2) գեներատոր՝ AEM SE 630 M6, 1882 կՎտ, 2012թ,

3) հիդրոտուրբին՝ F-1700/45, 1700 կՎտ, 2017թ,

4) գեներատոր՝ СГ2-1600-12У3, 1600 կՎտ, 2014թ:»:

2. «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերությանն ազատել 2017 թվականի մարտի 1-ի №338 գրությամբ ներկայացված բանկային երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած մեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆՊԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
26 ապրիլի 2017թ.
ժամը 16[00]